# ՎԱՀԱՆԱՁԵՎ ԳԵՂՁԻ ԲԱՐՈՐԱԿ ՀԱՆԳՈՒՅՑՆԵՐԻ ՆՈՐԱԳՈՒՅՆ ԲՈՒԺՄԱՆ ՄԵԹՈԴԻ՝ ՌԱԴԻՈՀԱՃԱԽԱԿԱՆ ԱԲԼԱՑԻԱՅԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

*ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԹԵՐԹԻԿ*



WIGMORE CLINIC

www.wigmoreclinic.am

*Քայլենք միասին*

## Արդյո՞ք ՌՀԱ միջամտությունը ցավոտ է

ՌՀԱ միջամտության ընթացքում բնական է, որ բուժառուն ունենա պարանոցի հատվածում սեղմող, ճնշող զգացողություն, բայց միջամտությունն ընդհանուր առմամբ ցավ չի առաջացնում:



## Միջամտությունից հետո սպի մնալո՞ւ է

Ոչ: Միջամտությունից հետո 1-2 օր պարանոցին փոքրիկ հետք կլինի էլեկտրոդի (ասեղի) մուտքի մասում, որը լավանալուց հետո տեսանելի սպի չի թողնում:



## Քանի՞ անգամ է պահանջվելու կատարել ՌՅԱ

Մեկ սեսիան ապահովում է հանգույցի չափերի կրճատում և բարելավում է բուժառուի ախտանշանները: Յազվադեպ՝ հանգույցի շատ մեծ չափերի կամ նյարդերին մոտ լինելու պարագայում հնարավոր է պահանջվի հավելյալ միջամտություն:

## ՌՅԱ միջամտությունից որքա՞ն ժամանակ անց է տեսանելի լինում արդյունքը

Դեպքերի մեծ մասում միջամտությունից 2-4 շաբաթ անց բուժառուն նկատում է հանգույցի չափի կրճատումը:





## Վահանաձև գեղձի հանգույցներ

Հանգույցների մեծ մասը բարորակ է լինում և վտանգ չի ներկայացնում: Սակայն դրանք կարող են անհարմարություն առաջացնել բուժառուի մոտ, ներառյալ՝ կլման ակտի դժվարացում կամ ցավոտություն, պարանոցի այտուց և մեծացում, ինչպես նաև կարող են հանգեցնել հորմոնների մակարդակի բարձրացման:



## Հանգույցներից ազատվելու ոչ-վիրահատական տարբերակ

ՌՀԱ-ն թույլ է տալիս անցանկալի հանգույցներից ձերբազատվել՝ առանց վիրահատության: Ռադիոհաճախական աբլացիայի միջոցով հանգույցի չափերը կրճատվում են, հարակից առողջ հյուսվածքը մնում է անվնաս և գեղձի ֆունկցիան բարելավվում է, արդյունքում երկարաժամկետ դեղորայքի ընդունման պահանջը ևս նվազում է:



## 1. Թիրախավորում

Ուլտրաձայնային ախտորոշման (սոնոգրաֆիա) միջոցով բժիշկը նախ տեղորոշում է հանգույցը, այնուհետև բարակ էլեկտրոդը ներմուծում է մաշկի միջով անմիջապես հանգույցի մեջ:



## 2. Բուժում

Էլեկտրոդի միջով ռադիոհաճախականային ալիքներ են փոխանցվում և հանգույցում ջերմություն են առաջացնում, որի քանակը վերահսկում է բժիշկը:



## 3. Արդյունք

Յանգույցը ջերմության ազդեցության ներքո դեգեներացիայի է ենթարկվում (ոչնչանում է):



## Արդյունքները

Նախքան ՌՀԱ-ն ՌՀԱ-ից 6 ամիս անց



Նախքան ՌՀԱ-ն ՌՀԱ-ից 1 տարի անց



@ STARmed RFA

**ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՌՀԱ ՄԻՋԱՄՏՈՒԹՅՈՒՆՆ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՒՄ Է ՈՒԻԳՄՈՐ ՔԼԻՆԻՔԻ ԻՆՏԵՐՎԵՆՑԻՈՆ ՌԱԴԻՈԼՈԳԻԱՅԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՈՒՄ**

IRG INTERVENTIONAL RADIOLOGY GROUP OF ARMENIA

WIGMORE CLINIC


## Ուիգմոր Քլինիք / Wigmore Clinic

+374 12345678, +374 44804470

Պուշկինի փող. 56, Երևան 0002, ՀՀ

www.wigmoreclinic.am

facebook.com/wigmoreclinic